Հ. Հ. ՖԵԼԵՔՅԱՆ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ «ՄԱՃԿԱԼ» ԼՐԱԳԻՐԸ (1922—1931)

Մեր երկրի պարբերական մամուլի պատմության մեջ ուրույն տեղ և արժեք ունեն գյուղացիական-գյուղատնտեսական լրագրերը, շաբաթաթերթերն ու հանդեսները, որոնք կոչված էին կարևոր դեր խաղալու ինչպես գյուղի աշխատավոր զանգվածների քաղաքական-կուլտուրական դաստիարակության, այնպես էլ գյուղատնտեսության կազմակերպման ու զարգացման, գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։ Այդ մամուլի վրա գրված խնդիրներն առավել հրատապ ու պատասխանատու էին մասնավորապես գյուղացիական այնպիսի մի երկրում, ինչպիսին Հայաստանն էր։

Խորհրդայնացումից անմիջապես հետո Հայաստանում ամենայն սրությամբ ծառացավ գյուղացիական լրագիր ունենալու պահանջը։ 1921 թ. հունվարի 8-ին լույս տեսավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Կարմիր գյուղացի» թերթի առաջին համարը։ Այս լրագիրն իր գործը սկսեց ընդհանուր-քաղաքական խնդիրների արծարծումից և նոր-նոր միայն քայլեր էր անում կենտրոնական գյուղացիական թերթ դառնալու ուղղությամբ, երբ դադարեց լույս տեսնելուց։ Նույն թվականի ամռանը այն վերակենդանացնելու փորձ արվեց. հրապարակ իջավ «Կարմիր գութան»-ը, որի հրատարակությունը, դժբախտաբար, շատ շուտով նույնպես հարկ եղավ ընդհատել՝ կադրերի բացակայության և այլ հանգամանքների պատճառով։

Այսպիսով, կենտրոնական գյուղացիական լրագրի պահանջը դարձյալ մնում էր օրակարգի մեջ։ Այդ բացը չէին կարող լրացնել 20-ական թվականների սկզբներին գավառներում լույս տեսնող թերթերը («Խորհրդային Զանգեզուր», «Կարմիր գյուղացի», «Կարմիր Լոռի», «Շիրակի ռանչպար», «Ռանչպար» և այլն), որոնք առավելապես տեղական հարցեր էին արծարծում։

Վերոհիշյալ պահանջը բավարարելու էր գալիս, ահա, «Մաճկալ»-ը, որ սկսեց լույս տեսնել 1922 թ. մայիսի 14-ից՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի հրատարակությամբ։ Ողջունելով գյուղացիական նոր լրագրի ծնունդը, «Խորհրդային Հայաստան»-ն ընդգծում էր. այս նոր պարբերականը, «որի հանդես գալով մեզ մոտ մի շատ կարևոր բաց է լցվում», «մեր ներկա իրականության մեջ մեծ դեր ունի խաղալիք»։ Հաջողություն մաղթելով «Մաճկալ»-ին իր մեծ ճանապարհի սկզբում, հանրապետության առաջատար թերթը հույս էր հայտնում, որ «նա իր վրա դրված պարտականությունը լիովին կկատարի»[1]։

Եվ իրոք, իր գոյության ամբողջ ընթացքում (1922 թ. մայիսից մինչև 1931 թ. հոկտեմբեր) «Մաճկալ»-ը արդյունավետ գործունեություն ծավալեց մեր հանրապետության գյուղացիության մեջ, մյուս պարբերականների հետ միասին զգալի չափով նպաստելով գյուղական իրականության համակողմանի ուսումնա-

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, № 108։

սիրմանը, սոցիալիստական հասարակական հարաբերությունների արմատավորմանը, աշխատավորության գաղափարական-քաղաքական դաստիարակությանը, բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդմանը և կուլտուր-կենցաղային կարևորագույն միջոցառումների կենսագործմանը։

«Մաճկալ»-ի էջերում արտացոլված են գյուղի աշխատավորության ջանքերը նոր հասարակարգի կառուցման համար. թերթն արձագանքում էր և սատարում ամեն մի օգտակար նախաձեռնություն, արձանագրում էր ձեռք բերված մեծ ու փոքր նվաճումները, ուշադրություն բևեռում դժվարություններին, չլուծված խնդիրների վրա, ծառանում խոչընդոտների դեմ· ««Մաճկալ»-ի մտրակի ուժն իրենց կաշվի վրա զգացել են բյուրոկրատները... լոդրերը, դասալիքները և բոլոր նրանք, ովքեր այս կամ այն կերպ արգելակ են հանդիսացել նոր, սոցիալիստական գյուղի համար մղվող պայքարին»[2]։

«Մաճկալ»-ի հազարից ավելի համարներում ամփոփված է Խորհրդային Հայաստանի գյուղի առաջին տասնամյակին վերաբերող հարուստ և ընդգրկման շրջանակներով բազմազան մի նյութ, որ որոշակի արժեք ունի այսօր սովետահայ գյուղացիության պատմության այդ շրջանի ուսումնասիրության համար՝ թե՛ փաստագրական-նկարագրական, թե՛ սոցիոլոգիական և թե՛ հոգեբանական տեսակետից։

«Մաճկալ»-ը լույս էր տեսնում սկզբում որպես շաբաթաթերթ (առաջին ամիսներին որոշ չափով խախտվել է այս պարբերականությունը՝ առանձին համարներ հրատարակվել են 10—12-օրյա ընդմիջումներով). 1923 թ. հոկտեմբերի 5-ից դառնում է երկօրյա, հոկտեմբերի 18-ից օրաթերթ, մի տարի անց լույս է տեսնում դարձյալ շաբաթը երեք անգամ (երբեմն նաև 4—5 համար). 1925 թ. հունվարի 18-ից վերածվում է շաբաթաթերթի. 1926—1929 թթ. եղել է եռօրյա, 1930—1931 թթ.՝ երկօրյա։

Հատկանշական են «Մաճկալ»-ի տպաքանակի, ստացած թղթակցությունների քանակի վերաբերյալ տվյալները։ Հրատարակության առաջին շրջանում թերթը լույս էր տեսնում 1000—1500 օրինակով, վերջին տարում բաժանորդների թիվը հասավ 18000-ի։ 1922—1925 թթ. «Մաճկալ»-ի թղթակիցների առավելագույն թիվը 400 էր, 1931-ին՝ մոտ 2000։ Համապատասխանորեն աճում էր նաև թղթակցությունների քանակը. սկզբնական շրջանում այնքան էլ հարուստ չէր խմբագրության փոստը, երկու համարների միջև ընկած օրերին ստացվող նամակների և թղթակցությունների թիվը 15—20-ից չէր անցնում. 1930—1931 թթ. խմբագրություն էր հասնում միջին թվով օրական 100-ից ավելի թղթակցություն։ Տպաքանակի բարձրացումը, թղթակցությունների ավելացումը վկայում էր մի կողմից՝ թերթի մասսայականության ու հեղինակության աճի, մյուս կողմից՝ նրա ազդեցության ոլորտի ընդլայնման, գյուղի աշխատավորության հետ կապերի խորացման ու ամրապնդման մասին։ Այս ամենը միաժամանակ կարող է համարվել գյուղի կուլտուրականության բարձրացման լավագույն չափանիշներից մեկը։ Միանգամայն տեղին էր «Խորհրդային Հայաստան»-ի առաջնորդողներից մեկում արված այն համեմատությունը, թե՝ ««Մաճկալ»-ի աճումը մեր գյուղի առաջխաղացման և կուլտուրականացման բարոմետրն է»[3]։

«Մաճկալ»-ը խմբագրել են Ե. Զուրարը, Մ. Զոլախյանը, Հ. Բաննահյանը,

---

2 «Խորհրդային Հայաստան», 1931, № 113։

3 Նույն տեղում, 1927, № 50։

Գ. Ղազարյանը, Է. Ջոփուրյանը, Ա. Հախումյանը, Հ. Հովհաննիսյանը։ Թերթի աշքի ընկնող աշխատակիցներից էին Պ. Ֆոլյանը, Կ. Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), Ա. Տոնյանը, Իս. Տեր-Ներսիսյանը, Ա. Աթանասյանը, Ալ. Մարգարյանը, գյուղատնտեսության ճանաչված մասնագետները։ «Մաճկալ»-ի հեղինակության բարձրացման մեջ անուրանալի ավանդ են ներդրել Աթաբեկ Խնկոյանը (Խնկո-Ապեր), որին անվանում էին «Մաճկալի բանաստեղծ», Ակսել Բակունցը, Վ. Անանյանը, Սիմակը և ուրիշներ։ «Մաճկալ»-ի հրատարակությունն աներևակայելի էր առանց գյուղթղթակիցների՝ նոր կյանքի կառուցման այդ առաջամարտիկների ակտիվ մասնակցության։

Ստորև կանդրադառնանք «Մաճկալ»-ի պատմության որոշ հարցերին՝ կանգ առնելով թերթի գործունեության մի քանի առավել նշանակալից կողմերի վրա։

* * *

Իր առջև դրված խնդիրներով և նպատակներով «Մաճկալ»-ը նոր երևույթ էր մեր իրականության մեջ։ Անդրադառնալով նման մի պարբերական ստեղծելու նախորդ փորձերին, անդրանիկ համարի խմբագրականում «Մաճկալ»-ը այսպես ձևակերպեց այն խնդիրները, որոնց կենսագործման համար կյանքի էր կոչված ինքը. «Հայաստանի գյուղացին այնքան եռանդ ու տոկունություն ունի, որ քարից էլ հաց կհանի... միայն թե վերացվի տգիտությունը, աղքատությունը և կեղտոտությունը։ Սրանց դեմ է, որ կռվելու է «Մաճկալ» գյուղացիական թերթը»։ Այնուհետև ընդգծելով, որ կարելի՛ է և պե՛տք է Հայաստանը դարձնել «լուսավորված և աղատ աշխատանքի երկիր», թերթը մի անգամ ևս հավաստում էր, որ աշխատավորության «միակ հարազատ ու հասկանալի իշխանությունը» բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանությունն է։ Ինչ վերաբերում է գյուղերում ու գավառներում տեղական իշխանության և գյուղացիների միջև երբեմն առաջացող կոնֆլիկտներին, բացատրում էր թերթը, ապա դրա պատճառը «կա՛մ անբարեխիղճ ու տգետ պաշտոնյաներն են, կա՛մ գյուղացիների անհասկաց լինելը խորհրդային կառավարության այս կամ այն կարգադրության մասին»։ Այս հանգամանքից էլ թերթը բխեցնում էր իր կարևոր անելիքներից մեկը. ««Մաճկալ»-ը իր ճիպոտով լա՛վ կշփփացնի մեղավորներին ու անդադար կբացատրի դեկրետները...»։ Թերթը հրապարակ էր իջնում տոգորված այն հավատով, թե՝ «իր սկսած գործը Հայաստանի բոլոր աշխատավոր գյուղացիների ու նրանց կարիքների մասին բոլոր անկեղծ մտածողների գործն է»[4]։

Կառավարության դեկրետներին, ժողկոմատների որոշումներին ու միջոցառումներին նվիրված հանրամատչելի-բացատրական հոդվածներով, գյուղատնտեսական, առողջապահական ու կենցաղային թեմաներով գրված պարզ, երբեմն նույնիսկ պարզունակ զրույցներով, նոր կյանքի համար արթնացող ամենալայն զանգվածներին հուզող խնդիրների գործնական արծարծումով «Մաճկալ»-ը իրական հետաքրքրություն հարուցեց՝ աստիճանաբար ներխուժելով հայկական գյուղի հասարակական ոլորտը։ Գավառներից ստացված առաջին թղթակցությունների երևալը լրագրի էջերում,— նյութեր, որոնք պատմում էին գյուղացու աշխատանքային ու հանապազօրյա հոգսերի ու հրճվանք-

4 «Մաճկալ», 1922, № 1։

ների մասին և մեծ մասամբ լույս էին տեսնում գրեթե անվոփոխ՝ ժողովրդական խոսվածքով, բնական-անկաշկանդ մտածելակերպով,— միանգամից համակրանքի մթնոլորտ ստեղծեց «Մաճկալ»-ի շուրջը։

1922 թ. վերջերին, տնտեսաշվարկային սիստեմին անցնելու հետևանքով, զգալի չափով վատացավ «Մաճկալ»-ի ֆինանսական կացությունը։ Թերթը կանգնած էր փակվելու վտանգի առջև։ Հարկ եղավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի միջամտություն։ քննելով խմբագրության դիմումը պարբերականի ֆինանսական ծանր դրության մասին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը 1923 թ. հունվարի 6-ին որոշեց.

ա) Առաջարկել Հողժողկոմատին, Պարենժողկոմատին և ԺՏԽ-ին՝ ժամանակին և անվերապահորեն ֆինանսավորել «Մաճկալ» լրագիրը։

բ) «Մաճկալ»-ը դարձնել վճարովի և պարտավորեցնել Կենտկոմի Ագիտպրոպ բաժնին՝ սկսել թերթի բաժանորդագրության կամպանիա»։

1924 թ. դեկտեմբերի 12-ին ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը հատուկ որոշում ընդունեց Անդրկովկասում գյուղացիական պարբերական մամուլի վիճակը բարելավելու մասին։ Անդրերկրկոմը պարտավորեցրեց անդրկովկասյան հանրապետությունների կենտկոմներին՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ թերթերի աշխատանքը գյուղում կուսակցության հերթական խնդիրների մակարդակին բարձրացնելու ուղղությամբ։ 1925 թ. հունվարի 15-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը Անդրերկրկոմի մամուլի բաժնին տեղեկացնում էր, որ 1924 թ. դեկտեմբերի 12-ի որոշման կենսագործման համար կատարված է հետևյալը.

1. «Մաճկալ»-ը վերածվել է շաբաթաթերթի՝ 8 էջից.

2. Լեզուն և ոճը հարմարեցված, մատչելի են դարձված կիսագրագետ մասսաներին.

3. Բաժանորդագինը 50 կոպեկից իջեցված է 20-ի։

4. Լրագիրն ունենալու է հետևյալ բաժինները՝ ա) գյուղատնտեսական, բ) գյուղթղթակիցների, գ) շաբաթական քաղաքական տեսության, դ) Հայաստանի և Խորհրդային Միության տնտեսական շինարարության և քաղաքական կյանքի ընդհանուր տեսության, ե) տեղեկատու-ինֆորմացիոն.

5. Գյուղթղթակիցների կազմակերպման և թերթի հետ նրանց կապը ապահովելու նպատակով հրահանգված է շրջաններում ու գավառներում ստեղծել գյուղթղթակիցների բյուրոներ, անցկացնել խորհրդակցություններ[6]։

«Մաճկալ»-ի խմբագրությունը ջանում էր հնարավորին չափ շատ տեղեկություններ ստանալ գյուղացիությանը հուզող ամենատարբեր հարցերի վերաբերյալ, թերթի էջերում արտացոլել գյուղի իրական պատկերը (այդ նպատակին էին ծառայում մասնավորապես «Լուրեր գյուղից», «Լուրեր գավառներից» բաժինները), հանրության սեփականությունը դարձնել ընդօրինակման արժանի լավ գործերը, ինչպես և բացահայտել թերություններն ու սխալները՝ ուշադրություն բևեռելով չլուծված խնդիրների վրա։

Այս ամենին զուգընթաց՝ «Մաճկալ»-ը ձգտում էր իր ընթերցողներին տեղյակ պահել խորհրդային մյուս հանրապետություններում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, արտասահմանյան երկրների աշխատավորների, մասնավորապես գյուղացիների կյանքի ու պայքարի դրվագներին («Խորհրդային երկրներում», «Ի՞նչ են գրում ուրիշ թերթերը», «Կապիտալի երկրներում» բա-

5 Տե՛ս ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 23, թ. 5։

6 ՄԼԻ Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 204, թ. 1։

ժինները)։ «Մաճկալ»-ը հաճախակի ելույթներ էր ունենում նաև խորհրդային կառավարության արտաքին քաղաքականության, կապիտալիստական երկրների հետ նրա ունեցած փոխհարաբերությունների, ազգային-ազատագրական շարժումների, խորհուրդների երկրի դեմ կիրառվող պրովոկացիաների և միջազգային-քաղաքական տարբեր խնդիրների վերաբերյալ՝ նվիրելով դրանց մեծ մասամբ առաջնորդող հոդվածներ (տե՛ս մասնավորապես 1924 և 1926—1927 թթ. համարները)։ ««Մաճկալ»-ը գյուղացու համար դարձել է հանրագիտական բառարան,— նշում էր «Խորհրդային Հայաստան»-ը,— որի մեջ նա գտնում է ամեն ինչի համար բավարար բացատրություն»[7]։

Իր ծրագրի կենսագործմանը հետամուտ՝ «Մաճկալ»-ը քաղաքական-լուսավորական գործունեությամբ նպաստում էր գյուղի աշխատավորների մտահորիզոնի ընդլայնմանը, նրանց նոր աշխարհայացքի կազմավորմանը, բարոյական-հասարակական նոր չափանիշների պատվաստմանը գյուղացիական ամենալայն զանգվածների աշխատանքային, առօրյա-կենցաղային և ընդհանրապես հասարակական ամենաբազմազան փոխհարաբերություններում։ Այս նպատակներին էին ծառայում նաև «Մաճկալ»-ում հրատարակվող առանձին թերթիկներն ու էջիկները («Աշխատավոր կնոջ թերթիկ», «Երիտասարդ մաճկալ», «Կարմիր Զինվոր» և այլն), որոնք գալիս էին առավել արդյունավետ դարձնելու թերթի աշխատանքը գյուղական երիտասարդության, գեղջկուհիների և կարմիրբանակայինների շրջանում։

««Մաճկալ»-ը գյուղացու ամենամոտ զրույցընկերն է,— գրում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը թերթի 500-րդ համարի լույսընծայման առթիվ հղած իր ողջույնի մեջ։— Շաբաթը երկու անգամ նա մտնում է աշխատավոր գյուղացու խրճիթը, խորհուրդներ տալիս բատրակին, չքավոր ու միջակ գյուղացուն՝ նրանց տնտեսության, կենցաղի ու անելիքների մասին։

«Մաճկալ»-ի հինգհարյուրերորդ համարը — սա նշանակում է ծանոթի հինգ հարյուր հանդիպում, հինգ հարյուր այցելություն։ Իսկ հինգ հարյուր հանդիպումը, հինգ հարյուր այցելությունը բավական է ծանոթությունը թշնամություն կամ, ընդհակառակը, բարեկամություն դարձնելու համար։

Այն փաստը,— եզրակացնում էր Ա. Հովհաննիսյանը,— որ «Մաճկալ»-ի բաժանորդների թիվը գնալով աճել է, նշան է, որ նա ընդարձակել է իր ծանոթների և զրուցընկերների շրջանը, նշան է, որ իր հանդիպումն ու զրույցը գյուղացու հետ նա դարձրել է բարեկամության իսկական աղբյուր»[8]։

Գյուղական հասարակայնության կազմակերպման գործում կարևոր տեղ հատկացնելով սոցիալիստական նոր օրենքների և օրինաչափությունների բացատրությանն ու պարզաբանմանը, «Մաճկալ»-ը առաջին իսկ համարներից դիմում էր գյուղի աշխատավորներին՝ խնդրելով գրել-հայտնել, թե ինչն է անհասկանալի իրենց համար խորհրդային օրենքներից ու դեկրետներից։ «Նոր օրենքներ», ««Մաճկալ»-ի պատասխանները» բաժիններում թերթը պարբերաբար անդրադառնում էր գյուղերից ստացվող այդ հարցումներին՝ տպագրելով այս կամ այն օրենքը բացատրող-պարզաբանող նյութեր՝ հոդվածներ, զրույց-կոնսուլտացիաներ, նամակներ և այլն։ «Մաճկալ»-ը առաջնորդվում էր այն ճշմարիտ ըմբռնումով, թե՝ «խորհրդային օրենքները ուժեղ են մեկ նրանով,

---

7 «Խորհրդային Հայաստան», 1927, № 50։

8 Նույն տեղում, № 18։

որ աշխատավոր գյուղացու շահն են պաշտպանում, մեկ էլ նրանով, որ ամեն մի աշխատավոր գյուղացի վերից-վար, լայնքից ու բոյից հասկանում է բանվորա-գյուղացիական կառավարության գրած օրենքները»[9]։

«Մաճկալ»-ը իր ամենահիմնական խնդիրներից մեկը համարում էր գյուղատնտեսական օգտակար գիտելիքների տարածումը, հողօգտագործման պապենական միջոցների փոխարեն նոր, առավել արդյունավետ եղանակների կիրառմանը նպաստելը։ Առաջին իսկ համարներից թերթում երևան եկավ ուշագրավ մի ռուբրիկա՝ «Մաճկալ»-ի խորհուրդները։ Ինչպե՞ս անել, ի՞նչ ձևով աշխատել, որպեսզի հնարավոր լինի ավելի լավ կազմակերպել գյուղացու տնտեսությունը, ավելի շատ բերք ու անասնամթերք ստանալ,— այս հարցերին էին պատասխանում այդ խորագրի ներքո զետեղվող նյութերը։ Ճիշտ է, դրանք սկզբում կազմված էին հապճեպ, համառոտ ու կցկտուր էին, բայց շուտով խմբագրությունը կարողացավ լայն հունի մեջ դնել այդ կարևոր գործը։ Արդեն 24-րդ համարում «Մաճկալ»-ը հայտնում էր իր ընթերցողներին, որ այսուհետև ունենալու է հատուկ Գյուղատնտեսական բաժին, որտեղ «շարունակաբար մեր գյուղացիների առաջ բացվելու են գյուղատնտեսական օգտակար գիտելիքներ»։ Թերթը հողագործներին, գյուղի մասնագետներին հորդորում էր «ջերմ մասնակցություն ունենալ» բաժնի աշխատանքներին։ «Մեր գյուղացիներից շատերը փորձով գիտեն, թե ինչպես անեն, որ իրենց աշխատանքը մեծ օգուտ տա։ Անհրաժեշտ է, որ նրանք էլ գրեն «Մաճկալ»-ի մեջ իրենց իմացածը և դրանով մյուս գյուղացիներին էլ օգնության գան՝ հողը, այս կամ այն բույսը լավ մշակելու, նաև գրեն, թե ինչ հարցեր են իրենց հետաքրքրում»։ Աշխատակցության հրավիրելով բոլոր այն մասնագետներին, որոնց համար «թանկ է մեր երկրի բարգավաճումն ու ծաղկումը», թերթը գրում էր· գյուղացին «պիտի սովորի լավ կուվել բնության պատահարների, երաշտի, հիվանդությունների և այլ չարիքների դեմ՝ երկրից սովը վերացնելու համար»։ Այս ուղղությամբ թերթի կատարած աշխատանքի անհրաժեշտությունն ավելի ակնառու կդառնա, եթե նկատի ունենանք ՀԿ(բ)Կ IV համագումարի այն դիտողությունը, թե մեր հանրապետությունում դեռևս թույլ է ագրոպրոպագանդան[10]։

Շուտով «Գյուղատնտեսական»-ը դարձավ «Մաճկալ»-ի ամենահիմնական բաժինը և հաճախ զբաղեցնում էր թերթի ամբողջ մի էջը։ Նրանում տպագրվող հանրամատչելի զրույցներն ու մասնագիտական խորհուրդները գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների մշակության եղանակների, ագրո-տեխնիկական միջոցների կիրառության վերաբերյալ, ինչպես նաև գյուղացիական առաջավոր տնտեսությունների փորձի պարզաբանումը գործնական զգալի օժանդակություն ցույց տվին աշխատավոր գյուղացիությանը։ Մասնագիտական օգտակար հոդվածներով և արժեքավոր խորհուրդ-կոնսուլտացիաներով հաճախակի հանդես էին գալիս հանրապետության ճանաչված գյուղատնտեսները։

«Գյուղատնտեսական» բաժինը զգալի ուշադրություն էր դարձնում գյուղի ուսումնասիրությանը, կոոպերացիային, գյուղատնտեսական վարկի, պետապահովագրության խնդիրներին, կազմակերպում էր զեկուցումներ ու խորհրդակցություններ, ընդհանրացնում և տարածում էր առաջավոր փորձը։ ««Մաճկալ»-ի «մասսայական և գյուղատնտեսական երեսները» խոշոր դեր են խա-

9 «Մաճկալ», 1922, № 18։

10 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963, էջ 355։

ղում գյուղի աշխատավոր մասսաների ակտիվությունը կազմակերպելու տեսակետից»,— նշել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը թերթի մասին ընդունած որոշումներից մեկում[11]։

Առաջին իսկ համարներից «Մաճկալ»-ը, իբրև կենսական անհրաժեշտություն, գյուղի կոմունիստներին առաջադրեց գյուղատնտեսական գիտելիքներով զինվելու պահանջը («բոլշևիկներին դարձնել գյուղատնտես-ագրոնոմներ»)[12]։ Միայն խելացի ու արդյունավետ գործնական աշխատանքը, տնտեսության մշակման նոր եղանակները կիրառելիս ցուցաբերվող անձնական օրինակը հնարավորություն կտան կոմունիստ-գյուղացուն՝ ծավալելու դաստիարակչական-կազմակերպչական համապատասխան աշխատանք գյուղի վերակառուցման գործում, ընդգծում էր թերթը։ Ըստ որում՝ բացատրական-պրոպագանդիստական նպատակով «Մաճկալ»-ը օգտագործում էր նաև «Պրավդա»-ի «Կուսակցությունը և գյուղը» բաժնում զետեղված նյութերը, որոնց մեջ ըստ ամենայնի պատասխան էր տրվում այն հարցին, թե «ի՞նչ պիտի անի կոմունիստ-հողագործը»։ «Կոմունիստ գյուղացին պիտի ղեկավարի կոոպերացիան, ձեռք բերի միջակ գյուղացու վստահությունը, օգնի գյուղի առաջ գնալուն, անցնի հողից օգտվելու նոր ձևերին,— գրում էր թերթը և ապա, վկայակոչելով «Պրավդա»-ին, շարունակում.— Մեզանում սովորաբար կարծում են, որ ինչքան շատ կոմունիստներ ղբաղված լինեն զանազան պաշտոններում, այնքան ավելի մեծ կլինի կուսակցության ազդեցությունը գյուղի վրա. դա բոլորովի սխալ է»[13]։ Աստիճանաբար «Մաճկալ»-ն իր ուշադրության ոլորտի մեջ առավ գյուղական կուսակցական բջիջների աշխատանքը։ Արդեն 1924 թ. աշնանը թերթում բացվում է «Կուսակցությունը գյուղում» նոր բաժինը։

1924 թվականից սկսած «Մաճկալ»-ը անդրադառնում էր նաև բատրակների կազմակերպման, նրանց աշխատանքի և իրավունքների պաշտպանության հարցերին՝ «Գյուղի մշակների (բատրակների) կյանքից» բաժնում։ 1927 թ. նոյեմբերից շաբաթը մեկ անգամ սկսեց լույս տեսնել «Մաճկալ»-ի հավելված «Բատրակ» թերթիկը՝ իբրև Գյուղանտառի արհմիության կենտրոնական վարչության օրգան, որի էջերում բատրակների առօրյա հոգսերի ու պահանջների արտահայտության հետ մեկտեղ երբեմն-երբեմն տեղ էին գտնում նաև բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման հարցերին նվիրված նյութեր։ Այս խնդիրը, սակայն, «Մաճկալ»-ը ավելի մոտիկից քննում էր «Բանվորների մոտ» խորագրով բաժնում, որը թերթի էջերում սկսեց երևալ 1926 թ. նոյեմբերի վերջերից։ Այստեղ բանվորա-գյուղացիական դաշինքի, շեֆական աշխատանքի, քաղաքի և գյուղի կապերն ամրապնդելու հարցերը արծարծվում էին Հայաստանի, ինչպես նաև ողջ Միության արդյունաբերության նվաճումների պրոպագանդման լայն ֆոնի վրա։ Հետզհետե կարիք զգացվեց «Մաճկալ»-ում ունենալու հանրապետության առանձին խոշոր ձեռնարկությունների և ընդհանրապես արդյունաբերության ձեռք բերած հաջողություններն ու զարգացման հեռանկարներն արտացոլող հատուկ մի բաժին, որը և բացվեց 1927 թվականին՝ «Մեր արդյունաբերությունը» խորագրի ներքո։

Նշանակալից դեր խաղաց «Մաճկալ»-ը կուլտուրական-լուսավորական աստիճանում։ Անգրագիտության վերացում, նոր կենցաղի սաղմնավորում, առող-

11 Տե՛ս «Մաճկալ», 1929, № 36։

12 Նույն տեղում, 1922, № 4։

13 Նույն տեղում, 1924, № 41։

ջապահական տարրական գիտելիքների մասսայականացում, դպրոցական գործի վերակառուցում, խրճիթ-ընթերցարանների կազմակերպում, հակակրոնական պայքար, գեղջկուհու ազատագրում նահապետական կապանքներից,— ահա այն հիմնական խնդիրները, որոնց կենսագործմանը հետամուտ էր «Մաճկալ»-ը։

«Մաճկալ»-ին նվիրված առաջնորդողներից մեկում «Խորհրդային Հայաստան»-ը հիշեցնում էր, որ այս թերթը կկարողանա կատարել իր վրա դրված պարտականությունը, եթե «իր ագիտացիայով ու պրոպագանդայով նույնքան կոնկրետ ու պրակտիկ դառնա, ինչպես իր սպասավորած միջավայրն է» և «ընդգրկի գյուղացիական կենցաղն ամբողջությամբ և կոնկրետ մոտեցումով»[14]։ Այս առումով ուշագրավ է նաև «Մաճկալ»-ի խմբագրությանն ուղղված Ալ. Մյասնիկյանի մի նամակը, որի մեջ ասված էր. «Օգնենք գյուղացուն, բարձրացնենք գյուղի կուլտուրան։ Այստեղ մեծ դեր պիտի խաղա մամուլը և ամենից առաջ «Մաճկալ»-ը, որ, անշուշտ, կկատարի իր վրա դրած այդ հեղափոխական պարտականությունը»[15]։

1928 թ. հոկտեմբերից «Մաճկալ»-ում բացվեց «Ինքնուսի անկյուն»-ը. խմբագրությունը մտադրվել էր օժանդակել գյուղի «հասակավոր կիսագրագետներին» և բոլոր նրանց, ովքեր ցանկություն ունեն «ինքնաշխատության միջոցով սովորել՝ կարդացածը հասկանալ, լրագրով և գրքով պարապել, իրենց մտքերը գրավոր արտահայտել, պատի լրագրին և «Մաճկալ»-ին թղթակցել, կարողանալ նամակ, դիմում, արձանագրություն և այլ գրության գործնական ձևերը գրել»։ Միևնույն ժամանակ «Ինքնուսի անկյունը» նպատակ ուներ օգնելու առաջին աստիճանի կուսդպրոց, բարձր տիպի դպրոց կամ բանֆակ ընդունվել ցանկացողներին՝ ինքնուրույն կերպով նախապատրաստվելու հայերենից։

1930 թ. հունիսից «Մաճկալ»-ը ձեռնարկեց «հեռակա դասերի» անցկացմանը՝ դարձյալ կիսագրագետների համար։ Այդ հեռակա դասերի կամ ինչպես խմբագրությունը որակեց՝ «Գյուղական հանրակրթական դասընթաց»-ի նպատակն էր «օգտակար գիտելիքներ հաղորդել, սովորեցնել ուղիղ կարդալ, գրել և հաշվել, լրագրով, գրքով և քարտեզով աշխատել»։

«Մաճկալ»-ը մի շարք հոդվածներ տպագրեց գյուղական դպրոցի կազմակերպման, ուսուցման բարելավման, ուսուցչական կադրերի գաղափարական դաստիարակության և մասնագիտական վերապատրաստման խնդիրների մասին։ 1924 թվականի կեսերից թերթում հաճախակի երևում էր **Մեր դպրոցներում** բաժինը։

Գյուղի լուսավորության համար «Մաճկալ»-ի ծավալած ընդհանուր աշխատանքի կարևորագույն օղակներից մեկն էլ պայքարն էր կրոնական հավատալիքների դեմ, որոնք զգալիորեն խոչընդոտում էին նոր կենցաղի, առողջապահական գործի կազմակերպմանը, առհասարակ նոր մարդու բարոյական-քաղաքացիական կերպարի ձևավորմանը։ Հակակրոնական բնույթի նյութերը տեղ էին գտնում թերթի էջերում, մասնավորապես եկեղեցական տոների (Քրիստոսի ծնունդ, զատիկ և այլն) և ուխտագնացությունների նախօրեներին։ Դրանք մեծ մասամբ հանրամատչելի զրույցներ էին կրոնական հավատալիքների ծագման, նրանց պատճառած գործնական վնասների մասին։

---

14 «Խորհրդային Հայաստան», 1924, № 128։

15 «Մաճկալ», 1925, մարտի 25։

Իր հակակրոնական պայքարում «Մաճկալ»-ը ստիպված էր հաղթահարելու մի շարք դժվարություններ, որոնք կարելի է խմբավորել իբրև վնասակար մտայնության երկու արտահայտություններ։ Դրանցից մեկի կողմնակիցները գտնում էին, թե ավելորդ է կրոնի դեմ ակտիվ կերպով հանդես գալը, քանի որ սոցիալիստական շինարարության պրակտիկան ինքնաբերաբար մոռացման ու մահվան կդատապարտի կրոնական բոլոր հավատալիքները։ Նման դիրքորոշումը համարելով միանգամայն անընդունելի, «Մաճկալ»-ը գտնում էր, որ ընդհակառակը՝ հենց նոր կյանքի կառուցման շահերն են պահանջում կռվել կրոնի տարածած մտավոր և հոգեկան թույնի, սնահավատության դեմ. «Գյուղացին պիտի համոզվի, որ աղոթքով բերքը չի շատանա, պետք է սովորի տրակտորով վարել, սերմացուն գտել, ախտահանել, շարքացան անել և վնասատուների դեմ պայքարել»։

Կային նաև այսպես մտածողներ. կրոնական տոները և պաշտամունքային մյուս «հրապուրանքները» ունեն արդեն զուտ ձևական նշանակություն· ոչ ոք, ըստ էության, չի հավատում եկեղեցուն, և եթե գյուղացիներն, ասենք, ուխտ են գնում՝ ապա «միայն զվարճանալու համար»։ Այս մտայնության կրողները, որ վերջին հաշվով կորցնելով իրականության զգացողությունը՝ կրոնը համարում էին արդեն անցած-գնացած, մեռած ու թաղված մի բան, միանգամայն ավելորդ էին գտնում «Մաճկալ»-ի հակակրոնական պայքարը, պնդելով, թե՝ «կրոնի դեմ դրելը նշանակում է մեռելին սաղացնել»։ Հենց այդպես էլ ասված էր թերթի խմբագրությունում ստացված նամակներից մեկում[16]։ Հիշեցնելով, որ նամակագիրը պարզապես անտեսում է գյուղացիների լուսավորվածության ծայրահեղ ցածր մակարդակը, թերթի խմբագրությունը միաժամանակ ճիշտ էր համարում նրա այն դիտողություն-առաջարկը, թե հարկավոր է տպագրել բնության երևույթները բացատրող հոդվածներ։ «Մաճկալ»-ը խոստանում էր առաջիկա համարներից սկսել «կարելույն չափ բավարարել իր ընթերցողների այդ պահանջը»։ Եվ իրոք՝ շուտով թերթում երևացին նոր բաժիններ և ռուբրիկաներ՝ Գիտական, Առողջապահական, Բժշկի զրույցներ, Գիտություն և տեխնիկա և այլն։ Այս խորագրերի ներքո տպագրվում էին հանրամատչելի զրույցներ մարդու ծագման, բնության մեջ տեղի ունեցող երևույթների մասին, խորհուրդներ տարբեր հիվանդությունների առաջացումը կանխելու կամ բուժումը ճիշտ ու արդյունավետ դարձնելու վերաբերյալ, հայրենի և համաշխարհային գիտության ու տեխնիկայի նվաճումները մասսայականացնող նյութեր և այլն։ Ընթերցողների մտահորիզոնը ընդլայնելուց բացի՝ դրանք զգալի չափով նպաստեցին նաև «Մաճկալ»-ի հակակրոնական պայքարի ուժեղացման, ավելի բազմակողմանի, հետաքրքիր ու ազդեցիկ դարձրին մասսաների մեջ թերթի կատարած կուլտուրական-դաստիարակչական աշխատանքը։

Լինելով մասսայական-գյուղացիական լրագիր՝ «Մաճկալ»-ը, բնականաբար, որոշակի ակտիվություն դրսևորեց կոլեկտիվացման շրջանում։ Խմբագրությունը ամենայն հետևողականությամբ ձեռնամուխ եղավ Համկ(բ)կ XV համագումարի որոշումների պարզաբանմանը։ «Ոչ միայն կուսակցականները պետք է լավ իմանան այդ որոշումները,— գրում էր թերթը,— այլև անկուսակցական չքավոր ու միջակ գյուղացին ու բատրակը։ Մեր գյուղի կոմունիստների պարտքն է ծանոթացնել գյուղացուն կուսակցության հերթական անելիքների

16 Նույն տեղում, 1923, № 22։

հետ»[17]։ Մի շարք ինքնուրույն հոդվածներով ու թարգմանական նյութերով «Մաճկալ»-ը բացատրում էր կոլեկտիվացման անհրաժեշտությունը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում, միաժամանակ քննադատելով աջ-հաշտվողականության գաղափարախոսության դրսևորումները։ Ուշագրավ էր նաև թերթի պայքարը կուլակության դեմ։ 1928 թվականի սեպտեմբերից սկսած «Մաճկալ»-ը հրատարակում էր Կոլտնտեսության թերթիկ խորագրով առանձին էջեր, որոնց մեջ քննարկվում էին կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման հրատապ խնդիրները։

Անհրաժեշտ է այստեղ նշել, որ «Մաճկալ»-ը սկզբնական շրջանում միանդամայն ճիշտ դիրքորոշում ուներ կոլեկտիվացման հարցերում։ Այսպես, նշելով կոլտնտեսությունների զգալի թվական աճը մեր հանրապետությունում, 1929 թվականի հունվարին «Լենինի հետ» խորագրով առաջնորդողում թերթը գրում էր. «Բայց մենակ բանը թվումը չի։ Պետք է աշխատել, որ կոլեկտիվներն ամրանան, ուժեղանան և շատ տնտեսություններ ընդգրկեն։ Լենինն ասել է, որ մենք եթե մենակ խոսենք կոմունաների մասին և ոչնչով ցույց չտանք գյուղացուն նրանց առավելությունն անհատական տնտեսությունից, ապա գյուղացին մեր խոսքին չի հավատա։ Մեր կոլեկտիվները գործով պետք է ցույց տան, որ ավելի հառաջադեմ են, ավելի արդյունավետ, քան անհատ տնտեսությունները։ Այն ժամանակ ավելի շատ գյուղացիներ կուզենան կոլեկտիվ կազմակերպել»[18]։ «Ամեն մի միջոց պետք է ձեռք առնել, որպեսզի կուսակցության ճիշտ գիծը շաղավաղվի գյուղական աշխատանքների բոլոր բնագավառներում,— գրում էր «Մաճկալ»-ը մի այլ առաջնորդողում և ապա, մատնանշելով միջակի հանդեպ ցուցաբերվող սխալ վերաբերմունքի փաստերը, ընդհանրացնում.— Ով որ մոռանում, թերագնահատում է միջակի դերը չքավորի հետ դաշինք կազմելու գործում, նա խոշոր չափով աղավաղում է կուսակցության գիծը, ջուր է լցնում կուլակի և հակախորհրդային տարրերի ջրաղացին և հանդիսանում ոչ թե մեր բարեկամը, այլ թշնամին»[19]։

Հատկանշական է «Մաճկալ»-ի հետևյալ ելույթը, որն ինչ-որ չափով նաև ինքնաքննադատական բնույթ ուներ։ 1929 թվականի հոկտեմբերին, «Բերքի և կոլեկտիվացման օրը», «Մաճկալ»-ը, Հայգյուղկոոպը և Կոլխոզկենտրոնը հրատարակեցին Դեպի Կոլեկտիվացում խորագրով մի թերթ՝ բացառիկ համար։ Այստեղ կոլտնտշարժման հրատապ հարցերին նվիրված մի քանի արժեքավոր նյութերի կողքին զետեղված էր նաև «Մաճկալ»-ի ակտիվ աշխատակից Խնկո-Ապոր մի ոտանավորը, ավելի շուտ՝ չափածո սպառնալիքը՝ գրված բացահայտ ձախության դիրքերից.

Վա՜յ ն է նրանց,
Ա՜հն է նրանց,
Մա՜հն է նրանց,
Որ կոլխոզներ չեն սարքի...

Շուտով հենց ինքը՝ «Մաճկալ»-ը հանդես եկավ սխալ և վնասակար այս քարոզի դեմ[20]։ «Ի՞նչ է, ուրեմն, դուրս գալիս. այն գյուղացուն, որ կոլխոզ չի

17 «Մաճկալ», 1927, № 102։
18 «Մաճկալ», 1929, № 6։
19 Նույն տեղում, № 11։
20 Նույն տեղում, № 82։

մտնում, որը անհատական իր սեփական տնտեսությունն է վարում, ահ ու մա՞հ է սպասում»,— հարցնում էր թերթը և ապա բացատրում.— «Իհարկե, ճիշտ է, որ խոշոր, կենտրոնացրած, մեքենայացրած տնտեսությունը գյուղում պիտի հաղթի մանր անհատական տնտեսություններին։ Բայց այդ հաղթանակը պետք է կատարվի և կատարվում է ոչ թե «ահ ու մահով», ոչ թե զորով, բռնի միջոցով, ինչպես կարող է հասկացվել Խնկո-Ապոր բանաստեղծությունից. կուսակցությունը և խորհրդային իշխանությունը զորով գյուղատնտեսության կոլեկտիվացում չեն ստեղծում... չեն վերցնում ու խեղդում մասնավոր, անհատական չքավոր և միջակ գյուղացիական տնտեսությունները։ Խորհրդային իշխանությունը, ամուր հենվելով չքավորի ու բատրակի վրա, միջակ գյուղացիների հետ միասին, կոլեկտիվ տնտեսությունների և կոոպերացիայի վրա հենվելով, պայքար է մղում կուլակային տնտեսությունների դեմ»։ Այն ժամանակ դեռ շրջանառության մեջ չէր դրված «ձախ քյալլագյոզություն» արտահայտությունը, որով հետագայում սկսեցին որակել նման երևույթները, և հոդվածագիրը այդ ոտանավորի տպագրությունը պարզապես համարեց «անթույլատրելի և կոպիտ սխալ», որը «մի կողմից՝ կարող է շփոթեցնել կոլեկտիվի գիտակցության չհասած չքավոր և միջակ գյուղացիներին և մյուս կողմից՝ կուլակների ձեռքին զենք է տալիս կոլտնտեսությունների գաղափարը վարկաբեկելու համար»։

Դժբախտաբար, շուտով «Մաճկալ»-ն ինքը կոպիտ սխալներ արեց կոլեկտիվացման հարցերում, տուրք տալով այն չհիմնավորված հապճեպությանը, որ ցուցաբերեցին կուսակցական և սովետական կազմակերպությունները գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բարդ ու դժվարին խնդիրները լուծելիս։ Հայտնի է, որ 1929 թվականի վերջերին և հատկապես հաջորդ տարվա սկզբին ավելի հաճախակի դարձան կոլտնտեսություն կազմակերպելու կամավորության լենինյան սկզբունքի խախտման դեպքերը, գլխապտույտ արագություն հաղորդվեց կոլեկտիվացման տեմպերին, միջակ գյուղացու նկատմամբ գործադրված բռնությունները հասան աղետալի չափերի... Եվ փոխանակ ահազանգելու նման երևույթների մասին, կուսակցության գծի կոպիտ խեղաթյուրումների դեմ ըմբոստանալու փոխարեն՝ շատ անգամ մամուլն ինքն էր տոն տալիս այդ ամենին՝ ավելի խորացնելով տեղական մարմինների սխալները։ Հայտնի է նաև, որ այդ անառողջ «խանդավառությանը» զգալի չափով տոն էին տալիս մամուլի նույնիսկ ամենահեղինակավոր օրգանները[21]։

1930 թվականի մարտի 14-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը ընդունեց «Կոլտնտեսային շարժման մեջ կուսակցական գծից կատարվող շեղումների դեմ պայքարելու մասին» հայտնի որոշումը, որը արմատական շրջադարձ առաջացրեց նաև մեր երկրի պարբերական մամուլի աշխատանքներում։ Թերթերն ու հանդեսները ետադարձ հայացք գցեցին իրենց երեկվա խոսք ու գործի վրա. շատ բան վերանայվեց ու վերագնահատվեց՝ կուսակցական որոշումների նոր լույսի տակ։ «Կոլեկտիվացման բուռն շրջանում,— գրում էր «Մաճկալ»-ը՝ ինքնաքննադատաբար անդրադառնալով իր աշխատանքում տեղ գտած վրիպումներին,— «Մաճկալ»-ը կատարեց մի շարք սխալներ. երբ սոսկ թվական աճումը թմբկահարեց իբրև կոլեկտիվացման նվաճում։ Ժամանակին հիշտ դիրքավո-

21 Տե՛ս «Партийная и советская печать в борьбе за построение социализма и коммунизма», М., 1966, էջ 197—198։

ում ապակուլակացման վերաբերմամբ «Մաճկալ»-ը չկարողացավ տալ»[22]։ Այս ամենը ինչ-որ չափով հետևանք էր նաև այն բանի, որ զգալիորեն թուլացել էին աշխատավոր գանգվածների հետ թերթի, և առհասարակ մամուլի, ունեցած կապերը։ «Առանձնապես մեր թերթը,— նորից իր թերություններն էր մատնանշում «Մաճկալ»-ը,— ...վերջին ժամանակներս տառապում է մասսաներից հեռու գտնվելու—նրանց հետ կենդանի, մշտական և պարբերական կապ չունենալու վտանգավոր հիվանդությամբ»[23]։

Կուսակցության հայտնի որոշումներից հետո մեր երկրի մամուլը կրկին դուրս եկավ պայքարի առաջավոր գիծ, ուժեղացրեց իր կապերը գյուղական իրականության հետ։ Ըստ որում՝ այդ շրջադարձի մեջ նկատվում էր շատ նշանակալից մի երևույթ. կոլտնտեսային շինարարության ընթացքում կուսակցության գծից կատարված շեղումների դեմ պայքարելիս պարբերական մամուլը գործադրում էր անհամեմատ ավելի բուռն ջանքեր ու եռանդ, ավելի կրքոտ հետևողականություն էր դրսևորում, քան այդ նույն սխալներին կամա թե ակամա տուրք տալու շրջանում։ Եվ սա՛ էր բնորոշը ինչպես ամբողջ Միության, այնպես էլ մեր հանրապետության մամուլի օրգանների և մասնավորապես «Մաճկալ»-ի համար։ Առարկություն չվերցնող հրամայական տոնը, որ գալիս էր ամենևին էլ ոչ իրականության խոր ճանաչողությունից, տեղը զիջեց բացատրական-կազմակերպչական հետևողական աշխատանքին։

Կոլտնտշարժման մեջ կուսակցության գծի ճիշտ կիրառման համար մղվող պայքարում իր գլխավոր խնդիրներից մեկը «Մաճկալ»-ը ձևակերպում էր հետևյալ կերպ. «Հայտաբերել սխալները և անմիջապես ուղղել. վերջ տալ աղավաղումներին. պատժել բոլոր նրանց, ովքեր սխալները չեն ուզում ճանաչել և ուղղել»[24]։ Այս ոգով ներթափանցված ելույթները զգալի տեղ են բռնում թերթի էջերում սկսած 1930 թվականի ապրիլից։

«Մաճկալ»-ը իր ուշադրության կենտրոնում էր պահում կոլտնտեսությունների կազմակերպական և բարոյա-քաղաքական ամրապնդման, կոլտնտեսական արտելի կանոնադրությունը պարզաբանելու հարցերը՝ այդ ամենը կապելով մեր հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման ընթացիկ գործնական աշխատանքների հետ։ Թերթի մշտական բաժիններից մեկը դարձավ Կոլտնտեսականի անկյունը (հաճախ այն զետեղվում էր «Հարց ու պատասխան» խորագրի ներքո)։ Տպագրելով ընթերցողներից ստացած բազմապիսի հարցերը, «Մաճկալ»-ը պատասխանում էր դրանց կոնսուլտացիոն բնույթի հաղորդում-բացատրություններով՝ պարզաբանելով կոլտնտեսությունների ղեկավարման, միջակի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, բերքի բաշխման, անձնական և հանրային սեփականության փոխհարաբերության՝ գործնական նշանակություն ունեցող և գյուղական լայն մասսաներին հուզող խնդիրները։ Գյուղի ակտիվիստի անկյունը բաժնում թերթը զետեղում էր գյուղում կուսակցության քաղաքականությանը նվիրված տեսական բնույթի պրոպագանդիստական հոդվածներ, որոնց նպատակն էր ճիշտ կողմնորոշում տալ կոլտնտշարժման ակտիվիստներին։

Այս ամենից բացի, գյուղատնտեսական ընթացիկ աշխատանքները ավելի սոտիկից, հենց տեղերում ուսումնասիրելու և նկատվող թերությունների վե-

---

22 «Մաճկալ», 1930, № 51։

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում։

լացմանը ավելի օպերատիվ միջամտությամբ նպաստելու համար Հայաստանի մի շարք շրջաններում «Մաճկալ»-ը կազմակերպեց շրջիկ խմբագրություններ։ Դրանք յուրովի ռեյդեր էին՝ թերթի աշխատակցի, տվյալ շրջանի թղթակիցների և գյուղակտիվիստների մասնակցությամբ։ Նյութերը հրատարակվում էին «Մաճկալ»-ում առանձին էջերով՝ իբրև հատուկ թողարկումներ։ Մի տարվա ընթացքում (1930 թ. հոկտեմբեր—1931 թ. հոկտեմբեր) լույս տեսան հետևյալ էջիկները. «Մանկալ»-ը Դարալագյազում (6 համար), «Մանկալ»-ը Շամշադինում (6 համար), «Մանկալ»-ը Ղարամիլիսայում (2 համար), «Մանկալ»-ը Դորիսում (4 համար), «Մանկալ»-ը Սաեփանավանում (1 համար), և «Մանկալ»-ը Սիսիանում (1 համար)։

Մեր հանրապետությունում սովխոզների կազմակերպմանը նպաստելու, նրանցում ներգրավված աշխատավորներին հուզող հարցերին արձագանքելու նպատակով՝ «Մաճկալ»-ը 1931 թվականի ապրիլից սկսեց հրատարակել Գյուղատնտեսական բանվոր խորագրով հավելվածը, որն զբաղեցնում էր թերթի 4-րդ էջը։ Օգոստոսից հավելվածը վերանվանվեց Գյուղի բանվոր։ Հրատարակվեց հավելվածի 17 համար, որոնք ուշագրավ են ինչպես այդ շրջանում Հայաստանում սովխոզշինարարության վերաբերյալ իրենց հաղորդած տվյալներով, այնպես էլ, առավելապես, բանվորական ուժի հայթայթման ու կարգավորման ասպարեզում գործադրված ջանքերը վերապատկերելու տեսակետից։

Կոլեկտիվացման հետագա ընթացքը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ծավալումը, գյուղի հասարակական-քաղաքական կյանքի բուռն վերելքը և կուլտուր-կենցաղային պայմանների, ըստ ամենայնի, հեղաշրջման անհրաժեշտությունը պահանջում էին համապատասխանորեն վերակառուցել նաև գյուղացիական մամուլը։

«Մաճկալ»-ը արդեն կատարել էր իր դերը. շուրջ մեկ տասնամյակ նա մեր հանրապետության գյուղական աշխատավորության նորօրյա ջանքերի ակտիվ արձագանքողն ու սրտացավ խրախուսողը եղավ, թե՛ տնտեսությունը հասարակական նոր հիմունքներով վերակառուցելու, և թե՛ սոցիալիստական հասարակական-բարոյական նորմերի արմատավորման ասպարեզներում։ Եվ իր այդ շնորհակալ գործը անելիս, Հայաստանի ամենամեծ ու ամենասիրված գյուղացիական թերթն ստեղծեց այնպիսի ուսանելի ավանդներ, որոնք ամուր պատվանդան էին դառնալու նրա հաջորդների համար մեր իրականության մեջ։ Այդպիսի համոզումով էր, ահա, «Մաճկալ»-ը իր տեղն ու դերը հանձնում իրեն փոխարինելու եկած գյուղացիական նոր լրագրին, իր վերջին համարում՝ 1931 թվականի հոկտեմբերի 20-ին ազդարարելով ի լուր ընթերցողների. ««Մաճկալ»-ի փոխարեն նոյեմբերի 1-ից լույս է տեսնելու շաբաթը 3 անգամ, մեծացրած ծավալով նոր թերթ՝ «Սոցիալիստական գյուղատնտեսություն»-ը։